



ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

1843-1898

ՀԱՏՈՐ ԾԶ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԵՕԹՆ ՀԱՐԻԻՐԵՄԵԱՆ

Ս. ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՒՆԵՑԻՈՅՆ՝ ՄԱՅՈՒԱՆ



Ս. ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՒՆԵՑԻ

ՔԱՂՅՐ և ՆՈՒՐ
բազմապատկեր
մէ՛ որ կը յորդորէ
զմեզ թերթի մի
քանի էջերը ՆՈՒՐ
րեւ Անոր յիշատակին,
որ մեր Սուրբ
Հայր և Վարդապետաց
վերջինն է
ղաւ և զերազանցն
սրբաւթեամբ և
հանճարով, որպէս
և իրաւամբ կոչեն
զինքն այլեալ յիշատակարանքս
հռմեծ, աշխարհաւոյս
վարդապետ, և առանձինն՝
«Սիրելի»
անունը կը յառկացնեն
իրեն և Եօթն Հարիւր տա-

րի առաջ, 1198ին, շիջաւ լոյսն Անոր՝ որ այնքան տալի կրկնիոյ
արեւն եղաւ, և որու նմանը չի ծագեց այլ եւս մեր երկնակա-

Կ. Նոր յայտնաւած յիշատակագիր մի կ'ըսէ. «Ի վերջին աւուրս և ի
լսնացեալ ժամանակին՝ պաղարեւոյցաւ ճիւղն օրհնութեան և հոգեւոր ող-

մարին վրայ¹։ Ի՞նչ զարմանք տպաւ, եթէ
այնուհետեւ սուգ և խաւար պատեց հայութիւ-
նը։ Քայց, ափսոս, որ փոխանակ վայելելու
ոմանք անոր պայծառութիւնը, նախանձու և
տղիտութեամբ կուրացեալը՝ տեւ տեւ զրպար-
տութեամբը ուզեցին խափանել անոր լոյսը։
այլ, ի զօր, զի անոր ուժոյն առջեւ հաշի-
ցան, ինկան կորակոր։ Եւ այսու աւելի եւս
փայլեցաւ այն մեծ հոգին։ զի միշտը՝ աւելի
եւս պնդացուցին անոր կորովը, հալածանք՝
հոշակեցին անունը, զրպարտութիւնը՝ սրե-
ցին գրիչը, հակառակութիւնը՝ յաղթական
երեւցուցին զինքը աշխարհի։ որով միայն
անձուկ շրջանի մէջ չի մնաց իւր համբաւն,
այլ ինչպէս ալիք, ժայռէ ժայռ բախելով, ա-
ւելի սաստիկ կը մնչին, այսպէս նաեւ Լամ-
բուռեցուց անունն հնչեց՝ զարմանքով, վա-
քերէ և անապատներէ սկսեալ՝ մինչեւ յԱն-
տիոք և յաբղանիս Բիւզանդիոնի, և մինչեւ
իսկ ի ծայրս արեւմտից։ Եթէ նա, դեռ այն
ինչ ծագած, այնքան փայլեցաւ, ի՞նչ պիտի
լինէր արդեօք՝ եթէ մինչեւ ասպարիդին վեր-
ջը հասնէր։ Արդ, թողլով ինչ որ կրնար լի-
նել, մենք նկատենք միայն ինչ որ եղաւ նա։
Քայց ասոր մէջ եւս չափաւորենք զմեզ։ զի
թէ ուզենք նկատել զինքը իւր բոլոր էու-
թեամբ, դիտած պիտի լինէինք ծածոնային
արեգակը իւր միջօրեայ պայծառութեան մէջ։
այդ անհնարին է։ Առնունք ապա այդ արեւին
մէկ նշույլը, իրեն զրական հանճարը, լու-
սաւոր և ընդարձակ միտքը և եկեղեցազարդ
գործունէութիւնը, որովք աննման հանդիսա-
ցաւ։ և այն սակաւէն պիտի կարենանք ա-
զօտ զազափար մի կազմել իւր ամբողջու-
թեան մասին։ Հետեւաբար, իսկ հարեւանցի
ակնարկ մի պիտի տանք իւր հոգւոյն հիա-
նալի գեղեցկութեան, և պիտի անցնինք զի-
տել իւր միտքը և սիրտը՝ իրենց հրաշակեր-
տեց մէջ։

կոչն, որ զգեղեցիկ վարդապետութեան մզելով
զինքն՝ եկեղեցւոյ մանկանց, զամենեւեան ար-
բաւլս գործէ երկնաւորին սիրով։ և ինչքն ըստ
անձնակիր խառնման ի հարազատ սրբազորմ
սէրն, ըստ Որոտման որդւոյն, զմիտելին սսեմ
նմա յատուութիւն անուան, աշխարհաւոյս վար-

*
*

Մինչ Շնորհաւոյ արեւն նուազելու մտ-
էր, հազիւ կը սկսէր ծագիլ Լամբուռեցւոյ
արեւն², որ և սակաւ տարիներու մէջ հասաւ
իւր պայծառութեան գագաթնակէտը։ Երկու
ազնուական տոհմից պատուաստէն բուսած
ծաղիկ, որ միշտ անթառամ մնաց, և դեռ
աշխարհ չի տեսած զայն, Աստուծոյ՝ նուի-
բուսած էր։ Եւ մինչ բարեպաշտ մայրն Շա-
հանդուհտ, յաղթուած սրտին զորովն և
մանկան հոգւոյն գեղեցկութենէն, կը վարա-
նէր ըրած ուխտին վրայ, վերէն Աստուած
իւր իրաւունքը կը պահանջէր. մահացու խո-
թութիւն մի կ'որոշէր ի սպառ մանկան վի-
ճակը։ Դեռ նորափթիթ՝ մայրենի զրկէն
կը վտարէ ի զնիւր Աստուծոյ. և ոչ այնքան
բաղդը կը հրէր փափկիկ շրթունքն «Մայր
իմ», որքան «Աստուած իմ» ձայնն։ Աչաց
մէջ կը փայլակէր մաքուր հոգին, խօսից մէջ՝
սուր միտքն։ Մայրն կը հսկէր միշտ անոր
բայքերուն, բայց նա կը գտնէր խոյս տալու
կերպը, կամ՝ քարանձակ մը խորը և կամ՝
ժայռի մը գլուխը կը գտնէր զինքը ծնւա-
յիւր՝ որ կ'աղօթէր։ Նա չէր, մանուկ այլ
բնովք մը՝ որ մարմին զգեցեր էր, որու
միակ զուարճութիւնքն էին՝ աղօթք և Ս. Գրոց
ընթերցումն։ Կը սիրէր զմիայնութիւն, ուր
զԱստուած կը գտնէր։ Եւ մինչ աշխարհ կը
պարզէր անոր առջեւ իւր հրապոյրները, նա
զըզուանքով ի բաց կը պարճունէր հոգւոյն
աչքը. և իրեն գետէ մը՝ մարմնոյ հանդից
և մեծովակէր վրայէն ցատքեղով անցնելով,
կը թռչէր զէպ ի վանքերը, անապատները և
լեռանց գլուխները, տատարակի նման մնչելու
և մեղուորէն գանձելու իմաստից հիւրը, ա-
պահով այս անգամ՝ թէ ոչ որ պիտի ար-

դապետն երկնաքաղաքացին Ներսէս ... :

1. Իւր ձեռաստուէն աշակերտն խաչատուր կ'ը-
սէ, իւր ողբոց մէջ. «Որ ով լինի՞ զերթ զինք
չըլինի»։ (Սխտանի. էջ 94)։
2. Շնորհաւոյն մեռաւ յամին 1173, իսկ
Լամբուռեցին ծնաւ 1183ին։

գելոյր իւր յենասէր թոկիւր, որ պիտի հաս-
ցունէր զինքը ի ծայր սրբութեան և զիտու-
թեան, և մինչեւ յերկինս իւր սիրելի գա-
ղարքն եղան՝ մերթ Սեւա լերինք, ուր քան
զամէն արեղայս աւելի պայծառացաւ ձգու-
թեամբք, և մերթ Սարգու կամ Ս. Գեորգ
անապատն, ուր երկնէր մտաց մէջ ապագայ
հրաշալի գրութիւնքը:

Հազիւ վեշտասանամեայ՝ քահանայ կը
ձեռնադրուի, որու հետ կ'ընդունի նաեւ ձեռ-
նադրողին՝ Ծնորհալոյ՝ անունը և հոգին և
Բայց արեւն չէր կարող երկար ժամանակ ամ-
պերու ներքեւ ծածկուած մնալ. Լամբրոնեցոյ
սրբութեան և հառնարոյ փայլն՝ յինքն ձգեց
նոյն ժամանակի կաթողիկոսին՝ աչքը, որ
բարձրացուց զինքը յաթոռ արքեպիսկոպո-
սութեան Տարսսնի, քսանեւերեքամեայ հա-
սակի մէջ: Սոյն պաշտօնն՝ գործօնութեան
նոր ասպարէզ մի բացած առջեւ, սակայն
ստանց բոլորովին անշատելու զինքը իւր սի-
րած քահանայութենէն, վանքերէն, որոնք ի-
րեն բազմազարդ կենաց զառն վայրկեանե-
րու միակ սփոփանքն եղան, ուր կ'երթայր
գտնելու մանկութեան անոյշ յիշատակները:
Այս, կը ծածկուէր նա մերթ ընդ մերթ
Սկեւոյ բարձանց վրայ կամ անապատե-
րու խորերը, — ուր բնութեան հրաշալիաց
մէջ՝ իւր խօսէր ընտանեացս Արարչին հետ,
կը ծարարէ՝ կը թալանայր Յիսուսի չար-
շարանաց խոկմամբք, և կը զովանայր ար-
քայութեան յուսով, — բայց շուրջանակի կը
սփռէր իւր լոյսը: Քուսն և բաղց, երկու բըռ-
նաւորք բնութեանս, իրեն համար խաղալիկ
էին. զի դիտէր, թէ « Ուրափ պահէն զմարմինն
ննչէ, հոգին զօրանայ, և տեսողականութիւնն
սրբի անօսրութեամբք »: Նա որ ամէն տեղ
և ժամանակ սերտմէր էր, ներուի՜ ինձ ըսել՝
կ'աստուածանայր պատարագելու պահուն .
բոյր մարմնով կրակ կը զգոնայր, զէմքն
բոց կ'արձակէր, և ծով արտասուքն դուրս
կը գեղուիս աչքերէն: Պարագային համեմատ՝
մերթ առիւծօրէն կը մոնչէր և մերթ գառն-

օրէն կը հեղանայր: Ո՛վ թան զինքն աւելի
տեղեակ եղաւ սրտերը միացնելու՝ զաղանեաց,
Բաւական է որ երեւէր ինքն, իսկոյն խոյս
կու տայր հակառակութեան ոգին, ինչպէս
խաւարը լուսն: Բայց միայն իւր յաշակոտ
թշնամեաց արտէն չի կրցաւ դուրս հալածել
նախանձը՝ յիսուական հեղութեամբն, մին-
չեւ որ չի շարժեց զեմսթեմեան զրկիւր: Սա-
կայն նա այսպիսի առթից մէջ երբէք չէր
կորուստաներ իւր ներքին խաղաղութիւնը .
վասն զի, ինչպէս կը գրէ ինքն, « Արդարեւ
չէք ումեք ի հակառակութենէ լեզուաց ան-
խառն մնալ, մինչ չեւ է մտեալ ի նորայն
խորան, այս է՝ յերուսաղէմ: Զի յորժամ
անդ մտանէ հոգին՝ հաւատոցն առաջնորդու-
թեամբ, ... այլ ոչ խառնեցուցանէ զնա լե-
զուազարութիւն և բամբասանք մարդկան շար-
ժելոց ի սատանայէ »: Ուր որ գնայր՝ սի-
րելի կ'ընէր իրքիցիքը, և պանծալի՜ իւր ազգը:
Որու հետ որ խօսէր, եթէ չի համոզէր միա-
քը՝ գէթ կը շահէր սիրտը. իսկ եթէ վիճա-
բանէր, անտարակոյս իրեն էր յաղթութիւնը:
Կ'երթայ նուիրակ առ կայսրն Գերմանացոց,
որ իտալականց հետ եկեր էր ի Կլիլիկա,
ուր ցոյց կու տայ իւր ընդարձակ համու-
թիւնը: Կ'երթայ նաեւ յարքունիս Բիւզան-
դինի՝ երկու անհաշտ ազգերը միաբանելու,
բաղցրութեամբ կը զիւլէր սրտերը, և իրեն
վարուել և զգուցութեամբ կը զարմացնէ զա-
մէնքը. սակայն չեն ճկիր այն յամառ մըռ-
քերն: Ի Տարսսն զամառուած ժողովին ոգին
էր նա, սիրոյ և խաղաղութեան հրեշտակ,
որոյ ամէն մի խօսքն իբր պատգամ էր ժո-
ղովական հարց: Անդադար կ'ամէր Լամբրո-
նեցոյ համբան, որոյ անուան շուրջը՝ ամէն
շրթունք զովեստից պատկներ կը բոլորէին,
իւր պայծառութեան առջեւ՝ իբրեւ աստեղը՝
տեղի կու տային զարուն ուրիշ ամէն գիա-
նական վարդապետք. զի այնպիսի իրեն յա-
տուկ շաւիղ մ'ընտրեց սրբութեան, որ ոչ
մէկուն գնալի չէր. արծիւ մ'էր, որու հետքն
անգամ հազիւ կը նշմարուէր: Ճշմարիտ ա-

1. Ծնորհալոյ յաջորդին: Գրեգոր Տղայի,
յամբն 1178:

2. Մեկն. Սաղմոս. Ել. ա. 13:

3. Անդ. Լ. ա. 24:

առքեայ, ճշմարիտ հովիւ մ'էր. ամենուն հետ կը հիւանդանայր, ամենուն հետ կը վշտանայր, ամէն տեղ և ամէն պիտոյից կը հասնէր. աղքատը և հարուստը մի և նոյն սիրով կ'ընդդիպէր, մէկու մը ցաւերը կը սփոփէր, ուրիշի մը վիրաց սպեղանի կը փնէր, այն մեծ Առաքելոյն նման, որուն հոգեկիր և առաքինութեանց արժանաւոր յաջորդ կը հռչակուէր¹։ Որքան սրտաշարժ էր արդեօք տեսնել՝ ամէն շորերը թրծի և ուրբաթ օրերը՝ երեք — չորս հարիւր աղքատաց խումբ մը, Տարսնի եկեղեցւոյն դրան առջեւ, որոց առատօրէն հաց և բակլայ կը բաշխուէր, որուն համար տասն հազար ոսկի յատկացուցեր էր Լամբրունցիւն. ո՞վ յայտ հաւատարբեր է մեր Ս. Հօր, Ո'վ չէ յուզուած անոր խօսքերէն. կոյ աղքեօք այնքան ցուրտ և անըզգայ սիրտ մը՝ որ չի վառուի անոր կրակէ հառաւանքներէն, որոց կայծերը կը զգանք դեռ եւս, «Առ ընդ ակնարկեմ, աղբիւր չրոյ կենդանուց», «Տոբ ինձ, Տէր Յիսուս», «Այլ շուրջ պատեալ էր տարակուսանացս», և իւր ուրիշ աղօթքներուն մէջ։ Բայց այդ չափազանց հօրն կը սպառէր զինքը, անգաղար ճգնութիւնը կը մաշէին մարմինը։ Այդ կ'ուստիացնէր զմահ, որ ուրիշ կերպ չէր համարձակեր մօտենալ իրեն։ Զգաց Սուրբն թէ մօտ էր կենաց թելն խզուելու. սաստիկ ուրախութեամբ լցաւ սիրտն. և վերջին անգամ մի եւս կատարելով Ս. Խորհուրդը արտաստուախառն սիրով, զուարթ դիմօք «Ընկալ զհոգի ներսիս ըս» ըսաւ, և աւանդեց մաքուր հոգին առ Աստուած, ի 14 յուլիսի, 1198։

* *

Լամբրունցեայ թուղթն առ Լեւոն և Պառարագամկնիւն բաւական տխուր կերպով կը ներկայացնեն մեզ, ԺԲ դարու եկեղեցա-

կան անձանց և պաշտամանց վիճակը. Հաղի թէ հարիւր տարի էր՝ որ տապալիւր էր Բագրատունի թաղաւորաց գահն. ի նմին ժամանակի մտանդի մէջ ըլլալով նաեւ հայրապետական թոռն, Կիլիկիոյ անընթաց բարձանց մէջ եկեր հաստատուել էր՝ հետո հայ աշխարհին կեցողունէն²։ Այս պարագայս շատ աշխտաբեր եղաւ մեր եկեղեցւոյն. մասն զի այս հեռաւորութեամբ գրեթէ խզեցաւ զիսոյն և անդամոց միութեան կապն, հետեւաբար Կիլիկիոյ կաթողիկոսը և վարդապետը չի կրցան իրենց փրկաբար ազդեցութիւնն ընել անոնց վրայ, որք բուն մեր աշխարհին կեցողունը կը գտնուէին։ Շատ տեղ վերի ի վայր եղեր էին նոյն դարուն ամենայն եկեղեցական կարգը և օրէնքը, աւանդութիւնը և սովորութիւնը։ Ամենայն ոք ազատ էր՝ ըստ բիմ նորանոր սովորութիւններ մուծանելու կամ եղածները վերցնելու, նոյն իսկ պառարագի Ս. Խորհուրդոյն կատարման մէջ։ Սրբաբան զգեստը և սպասք կորուստէր էին իրենց նշանակութիւնը, իւրաքանչիւր պաշտօնէն կամաց թողուած էր անոնց գործածութիւնն կամ ոչ։ Այն մեծաշուք հանդիսից, որովք կը կատարուէին երեքմեք սրբազան տօնախմբութիւնը՝ նոյն իսկ Բագրատունի և Արծրունի թագաւորաց ժամանակ, հազիւ լոկ յիշատակն ճնացեր էր³։ Առանձին սենեկաց մէջ, և այն՝ փակեալ դռներով, առանց սպասաւորաց կամ զարաց, սեւ փիւռնով, զլուսնի նին զիշտ դրած, երկու կանգուն վեղարով՝ վրացի սաքուլայով, կը մատուցանէին Սուրբ Խորհուրդը⁴. ոչ թէ Գողգոթայի զոհը կատարելու՝ այլ իրենց շահաւիճաւ ընելու նպատակաւ։ Ո'վ սարսափիւր ոճիր «Գնելոյ և վաճառելոյ եղեւ եկեղեցին կրպակ՝ ձրի շնորհաց Ս. Հոգւոյն⁵»։ Աստուծոյ պաշտօնեայք, անձնատուրք ի տուրեւառս, ի զբօսանս և յախտս, եկեղեցւոյ սեմերը չէին

1. «Եկեղեցիքն Անտիոքու, Լատինացւոցն և Հելլենացւոցն, որք Պաւլոսի անուամբն զմեր նուազութիւնս բարեհամբաւեն, և նորին աթոռոյն արժանապատիւ լինել յաջորդ վկայեն» (Թարգ առ Լեւոն. էջ 250-1)։

2. Լամբ. Մեկնութիւնն պատարագի. էջ 256։

3. Անդ. 256։

4. Լամբ. Թարգ առ Լեւոն. 217-219. 260։

5. Մեկն. պատարագի 547։

կոխեր՝ իբր անարժանը¹, իրենց հետ հե-
ռացնելով նաեւ ժողովուրդը Աստուծոյ սու-
նէն, որոնք տանիքները և մահիճները իրենց
աղօթից տեղ կ'ընէին²: Միշտ ընդհակա-
ռակն, Տարսնի մէջ, Սրբոյն օրինակներն
և խօսքերն վառեալը, բոլոր ժողովուրդն ա-
մէն օր կը խանէր Ս. Աստուածածին եկե-
ղեցին, ուր Աստուածամօր հրաշագործ պատ-
կերին պատճառաւ կը յորդէին նուրբ հա-
ւատացեցոց, նոյն իսկ ի Յունաց³: Յաճախ՝
տղէտը, թողած հովուական ցուպը և մանը,
կը բարձրանային յաստիճան քահանայու-
թեան, որոց խնամոց կը յանձնուէին ամ-
բողջ գիւղեր: Նոյն իսկ եպիսկոպոսը, իրենց
աստիճանին բարձրութեան անդէտը, Քրիս-
տոսի հօտը հովուելու անփոյթը, քաղաք-
ներէն հեռու՝ այրերու և ծերպերու մէջ կը
քնակէին⁴: «Ըստ որում գողցոցն է սովորու-
թիւն, կ'ըսէ Լամբրունցին, յանկարծակի մի
անգամ ի տարուջն կամ երկիցս յարձա-
կիմք ի վերայ հօտին, զմանա գիշատեմք,
զայլս կեղեքեմք, և զառկ արծաթոյն ժողո-
վեալ, փութապէս իբրեւ զգողս յորջն մեր
արագապէս եկեալ զտղարեմք, պատճառելով
թէ վանքան իմ⁵»: Քաղաքաց մէջ եկեղե-
ցիք չկային, նոյն իսկ իշխանանիստ քաղաքն
Սիս՝ զուրկ էր եպիսկոպոսէ և կաթողիկէէ,
որով, «Թէ տօն է, շտեսանէ ժողովուրդն զե-
պիսկոպոսն. թէ հանդիսական օր է, ոչ փա-
ռաւորի անուն Աստուծոյ ի ձեռս սորա ի
մէջնոց⁶»: Անհաւատ իշխանաց ձեռքը գերի
եղած էին եպիսկոպոսը, իրենց աստիճանին
յատուկ գործերն անգամ կատարելու իշխա-
նութիւն չունենալով՝ առանց անոնց հրամա-
նին. զայս կը հաստատէ նոյն ինքն Լամբրու-
նցին՝ ըսելով. «Չի լսեմք թէ Յուրբերն զոր-
ծեն զգործ եպիսկոպոսաց, և նոքա տան հրա-
ման ձեռնադրել և զարծաթն յինքեանս ըն-
դունին⁶»:

Լամբրունցին այս բոլոր և ուրիշ նման

անկարգութիւնները տեսնելով մեր ազգին մէջ,
և ընդհակառակն Լատինաց, Յունաց և Ասոր-
աց մէջ՝ շատ աւելի կարգապահութիւն, վա-
նորէից և եկեղեցեաց պայծառութիւն, կը
զոչէ սրտառուչ. «Չունիմք ճշմարտութիւն,
բարձաւ ստուգութիւն, զիաց քաղցրութիւն
սիրոյն Աստուծոյ. ամենեքեան իբրեաց դա-
տաւորս, ուղղեալ և ոչ ոք: Չի սրեալ են
զլեզուս առաջնորդը գիրեարս դատել... և
ամենայն օրինացն Աստուծոյ մոռացօնս ա-
բարբաք՝ Հարկատու գործ զերկրագործութիւնն
ստացաք՝ Քրիստոսի պաշտօնեայն... զեկե-
ղեցիս ժառանգութիւն մեզ առաք՝ և այլոց
շնորհեացաք. եպիսկոպոսը յաճախեն, և այց-
ելութիւնն նուազի. վանորայց շինին և բազ-
մանան, և ժառանգութիւն՝ ազգականաց շնոր-
հին, և այլն⁷»: Սակայն, կ'երեւի թո՛ւ Սուրբ
Հօրս մերթ անուշ և մերթ կծու խօսքերն
մնացին «Չայն բարբառոյ յանապատի». զի
տեղ մը կ'ըսէ. «Օգտի և ոչ ոք, ունկնդիր
բանիցս՝ ոչ քնաւ, ապաշաւ զղջման՝ ոչ ու-
մեք». երբեմն այլ՝ փոթորիկներ յարուցին
իւր զէմ, որոց առջեւ շտկարացաւ, այլ զէն
ի ձեռին կռուցաւ՝ վրէժինդիր փառացն Աս-
տուծոյ, մինչեւ որ լռեցուց զանոնք: Այս
ընդհանուր տապականութեան մէջ, որոյ ա-
լիքներն՝ (ըստ գեղեցիկ բացատրութեան
Սրբոյն) եկեղեցւոյ նաւուն զեկալտարաց զիւն
վեր բարձրացեր էին⁸, միայն Լամբրունցին
էր՝ որ իւր անստգիւտ վարուք և եկեղեցա-
սէր հոգսով՝ կարող էր համարձակ ձայնը
բարձրացնել, բողբոջել, որպէս զի զարման
տարուէր այն անկարգութեանց, թէ և գիտէր
թէ պիտի բամբասուէր՝ հալածուէր: Եւ յա-
ճախ երեսն ի վեր կ'ըսէին իրեն, թէ «Չըս
ազգն զօլիւս, և զօտարս բամբասեմ⁹». այլ
նա հաստատ մնաց իւր բռնած ուղղութեան
վրայ: Նախ ինքն սկսաւ իւր թեմին մէջ բա-
րեկարգութիւն մուծանել, Աստուծոյ պաշտօ-
նը պայծառացնել, Ս. Պատարագի խորհրդոյն

1. Թուղթ առ Լեւոն. 224:

2. Մեկն. պատմ. 31:

3. Թուղթ առ Լեւոն. 338:

4. Մեկնութիւն պատմ. 35:

5. Անք. 323:

6. Անք. 326:

7. Անք. 331:

8. Անք. 347:

9. Մեկն. պատարագի. 331:

գերագանցութիւնը բացատրել, քահանայական վիճակին բարձրութիւնը, հոգին և պարսեքերը ուսուցանել՝ որոց որ պէտք էր, եկեղեցւոյ կարգերը նորոգել, ինչպէս ինչ հնոց ժամանակ, իւրաքանչիւր սպասուց և զգեստաց խորհրդական իմաստները նշանակել, և այլն։ Տօնական հանգիսից բնծայեց նա այն շքեղութիւնը, ինչպէս էր երբեմն, ինքն իսկ գեղեցիկ շարականներ, տաղեր և իմաստայից ճառեր յօրինելով, որովք կը վառէր կը կրթէր իւր սիրելի հօտը, կը խնամէր զայն իրբեւ արթուն հովիւ, յաճախ անոնց մարմնաւոր պիտոյնքն եւս հոգայտով։ Դարձեալ, ժամերգութիւնները կարգի դրաւ, որոշելով զանոնք ըստ իւրաքանչիւր ժամուց օրուան. ինչպէս հաստատեց նաեւ Խաղաղական համերգութիւնը վաղեմեան մէջ, ուր խափանուէր էր¹։ Վաղեմեան, ուր շատ թուովութիւնը մտեր էին, բարեկարգեց խիստ օրէնքներով, անեցուց անոնց թիւը և ծաղկեցուց սրբութեամբ և պիտութեամբ։ Քրիստոսի իմացաւ նա, թէ յառաջն կրօնաւորը տարւոյն կէտք մի անգամ միայն էր ճաշակին, հաստատեց դարձեալ նոյն կանոնը²։ Անգամ մի, անշուշտ հանգիստաւոր պատարագի միջոց, հարցուցեր է Յունաց՝ թէ կ'ուզէն արդեօք յունարէն աւետարան կարդալ, ինչպէս էր երբեմն օտարութիւն ի Հռոմէ և այլուր։ Այս լուրս տարածուելով կը հասնի մինչեւ ի Հաղբաւ և ի Չորոյգեօտ, հարկաւ մեծին ուղտ լինելով։ Ո՛վ կարող է բացատրել արեղայից զայրոյթը. և ահա նորանոր ամբաստանութեան գրեթէ վեր ի վայր կ'ընեն Լեւոնի արքունիքը և բոլոր Կիլիկիա, բաց ի Լամբրու. նեցուց աղամանի սրահն, որ հանգաբարձն կը պատասխանէ անոնց. «Եթէ ես միոյ ազգի շատագոյժ էի, ընդ այլան երբ էր կար հաղորդել. բայց ընդ իւրաքանչիւրան որ միմեանց թշնամիքն ինձ խառնիմ, և զբնական շահիմ... և ունիմ բան՝ որ ամենայն հարցողի կարող եմ պատասխանել թէ ուղիղ ընթանամ³»։ Ո՛վ է վշտաց, հալածանաց,

զրպարաութեանց մէջ՝ մարդուս միակ զօրավիգն է ուղիղ և մաքուր խիղճն. ունէր զայդ Լամբրունեցին, և կարող էր ըսել վրէժաւաբար, թէ «Ուղիղ ընթանամ»։ Եթէ այդ բարոյական ոյժն ունի մարդս, որքան և տկար ըլլայ ինքն, գերնական զօրութիւն մի կը զգնուէ։ Ոչ միայն Սրբոյս Հետ էին Աստուած և գիտակցութիւնն, այլ և ամենայն ողջամտ անձինք՝ համամիտը և համաշունչը էին իրեն բռնած ուղղութեան։ Կիլիկիոյ մեծ մասն, բոլոր Վասպուրական նահանգն և Վարազդուս ուխտն, Տարօն գաւառն, և անոր Եսայի եպիսկոպոսն և գիտնական վարդապետն Թեոդորոս, Եկեղեցաց գաւառն և Սրբոյն Գրիգորի լոնն՝ հանդերձ եպիսկոպոսօք և վանականօք, ռոքա բոլորն ալ կը զրուատէին Լամբրունեցւոյ արարքը։ Դարձեալ, ուրիշ գիտնական վարդապետը և ճգնաւորը, ինչպէս էին երկու Ստեփանոսը, և ճգնաւորքն՝ Գեորգ, Քրիստոսաստուր և Տիմոթէոս, Խաչենոյ իշխանքն և վանորայրը, հիացմամբ կը լսէին և կը հռչակէին անոր յուսաւոր քիտքը և ըրած գեղեցիկ բարեկարգութիւնքը, որու օրինակին իրենք եւս կը հետեւէին։ Նոյն իսկ Յոյնք, Ասորիք և Լատինացիք կը գովէին Լամբրունեցւոյ քրիստոսական հոգին, աստուածային նախանձը⁴, որով կը ջանայր Քրիստոսի եկեղեցւոյն հերձեալ անգամները միացնել սերով, պայծառացնել զայն և զօրացնել հասարակաց թշնամւոյն յարձակմանց դէմ։ Ո՛վ վսեմ մտածութիւն, որ սակայն հալածողներ ունեցաւ։ Այսպէս ահա Լամբրունեցին, իւր դարուն մէջ մեծ վերանորոգիչ մեղաւ հայ եկեղեցւոյ, ինչ որ եղաւ յարեմուտս հարիւր տարի առաջ Գրիգոր Է մեծ քահանայապետն։

* *

Լամբրունեցին սովորական գրիչներէն չէ. ո՞ն մ'ունի՞ որ կը զիւթէ, և գերագանցէ այնու բան բոլոր իւր նախորդ և յետագայ մատենագիրները։ Իւր գրութեանց մէջ կը տես-

1. Թուոյթ առ Լեւոն. 242։

2. Անդ. 242-3։

3. Անդ. 220։

4. Թուոյթ առ Լեւոն. 220։

նենք զինքը, կը զգանք իւր տաքուկ սիրտը, իւր մաքուր հոգին: Ինքն՝ որչափ անուշ իւր խօսից և վարմանց մէջ, նոյնչափ կորովի՝ գրելուն մէջ. սուր մ'է՛ որ կը կտրէ, կրակ մ'է՛ որ կ'այրէ: Իմաստը այնպիսի բնակաւ, նութեամբ և այնչափ դիւրութեամբ կը յաւըրպէս իրերաց, ինչպէս առաւակի մ'ալիք: Ներս: Զի տեսնուիք ձեզ մի երեւելու կամ Հանճարաբանելու, ինչպէս կ'երեւի այդ երբեմն նոյն իսկ լուրջ հեղինակաց մօտ, զի իւր միակ նպատակն է՝ յերեւան Հանել ճշմարտութիւնը, ջատագով ըլլալ իրականաց և կարգաց: Կը տեսնես այն տեղ գերաշխարհիկ հոգի մը, որ առթուր կոխած աւանդին մարդկային կերք, վերէն կը սառառնի, իւր հետ վերացնելով նաեւ ընթերցողին միտքը, ուր՝ անմատչելի բարձրութեան վրայ՝ մահացած պայմանի մէջ անհատ և անհաս երեւցած իրերը՝ կը պարզէ:

Կը սիրեմ՝ տեսնել զինքը Տաւրոսի լեռանց մէջ, ի լուսութեան և ի միայնութեան, ուր մէկ կողմէն՝ թանձրախիտ անտառը և սեպածնե ժայռը, միւս կողմէ՝ զալարագեղ դաշտը և ականակիտ աղբիւրը կը զմայլեցըսնեն զմարդ և անուշ մտախոհութեանց մէջ կը ձգեն. ուր՝ ուրիշ ձայն չի լսուիր, բայց ջրոց կարկաջն և թռչնոց պալլալիկը, ուր՝ ուրիշ բան չի տեսնուիր, բայց ծառը բարձրաբերձը և հովիտը, որովք շրջապատեալ կը հիանայ մարդ՝ արարչադիր կարգաց և բնութեան հրաշալիաց վրայ: Այսպիսի տեղ մ'էր, ուր առանձնացած Լամբրոնցեին՝ գրեց իւր կորովի մտաց նախընծայ երկը, Պատարագի մեկնութիւնը: Ազգիս գրականութեան մեծ ծագոյն յիշատակարանաց մին է սա, որով հայ Հանճարն կարող է առանց շիկնելու ներկայանալ բոլոր աշխարհի առջեւ: Կրնայ դաւաճիլ Ս. Հարց ո՛ր է ծանրակշիւ գրոց կարգը: Ոչ միայն սրբազան իրաց և աւանդութեանց հմտութիւն, օտար ազգաց ծիսից և սովոր

ութեանց տեղեկութիւն¹ կը տեսնուի անդ, այլ մեծ միտք մը՝ որ կը թափանցէ ամենայն գաղտնեաց մէջ, կը թռչի հաւասարապէս ի բարձր և ի խոր, և լոյս կը արձակէ որ որ սաստիկ է մթնութիւնն: Երբեք վարանիլ կամ նշանշիլ չի գիտեր ո՛ր է գոռաւութեան առջեւ. տարակոյնները կը լուծէ, նախապաշարմանց գէմ կը կտուի, զեղծումները կը հարուածէ: Ո՛ր է քննչպէս համբարեց այդչափ հմտութիւն. քննչպէս կրցաւ ելնել մինչեւ ի ծայր աստուածաբանութեան և պերիպատութեան, և այն՝ այնպիսի թարմ հասակի մէջ:

Գեռ Հագիւ քսան և չորս տարեկան եւրիտասարդ մի, և ահա մերթ մարգարէի մը, մերթ աստուածառաք Ջորդջի մը, և մերթ Ս. Հօր մը դերը կը կատարէ իւր ազգին մէջ: Իւր մեկնութեան մէջ կարգաւ յառաջ կ'երթայ. դեռ բուն սրբաբանին ներսը չի մտած՝ իւր շուրջը կը դիտէ զոգայտով, և կը բացատրէ այն ամէն բան՝ որոնք ո՛ր է և է առնչուութիւն մ'ունին Ս. Խորհրդոյն հետ: Կը խօսի վարդապետութիւն եկեղեցւոյ կարգաց և աւանդանաց վրայ², որոց մասին բաւական թիւր գաղափարներ կային. կը խօսի այն ամէն նորաձեւութեանց գէմ, որոնք մտեր էին եկեղեցական պաշտամանց մէջ³, և առաջին Սուրբ Հարց աւանդութիւնները քննելով և մէջ բերելով՝ կ'աշխատի նախկին բարեկարգութիւնը հաստատել⁴. Հաւասար ուժով կը կտուի անդ՝ երկու գէմընդգէմ զեղծմանց հակառակ. առաջին, քահանայք եկեղեցեաց մէջ չափէ դուրս բազմացնելով սեղանները, առանց իրենց աստիճանին վայելելու սրբութիւնն ունենալու՝ ամենօրեայ պատարագելը իրեն առեւտաւ մ'ըրեր էին⁵. և առ այս մէջ կրբերէ նա, թէ իւր ժամանակները՝ յարեւելս իւրաքանչիւր եկեղեցեաց մէջ մէկ սեղան միայն կայր⁶: Երկրորդ, հաւատացեալք բնաւ չէին մերձենար Ս. Խորհրդոց⁷, եկեղեցի-

1. Մեկն. պատ. 51-527. Թոռոք առ Լեռն. 241-5:

2. Մեկն. պատ. 21-40. 80-92:

3. Անդ. 41-53:

4. Անդ. 54-79:

5. Անդ. 107:

6. Անդ. 108:

7. Անդ. 109-120:

ներն ամայի թողուած և ազօթելն մոռցուած էր։ Այս բանին համար ազօթելն էութիւնը կը բացատրէ, կը ցուցնէ՝ թէ Երբան սփռ-
փիշ է այն վշտաց, զօրաւոր՝ ամենայն վը-
տանգներու մէջ, աղբիւր յաջողութեանց¹,
և այլն։ Տեղ կը Երբանգատի երգոց հա-
մար. «Երգս մնաց առ մեզ դժուարաւորն
ամենեւին, և անփորձ գոյով անուշահամ
պտղոցն՝ զդառնահամսն անորոշելով ճշա-
կեմը²»։ Համարձակ կ'ըսէր այս ամէն բան,
թէ և նախազգացում մ'ունէր, թէ պիտի
արհամարհուէին իւր խօսքերն՝ մանուկ հա-
ռակին համար. ուստի զրբէ նախերգանքին մէջ
կ'աղաչէ «զիջանել առ (իւր) տկարութիւն և
մանկական իմաստ... որ անմարթ էր ծե-
րունեաց և կատարելոց հասակաւ ուսուցիչ
լինելը³»։ և այլուր. «Մի՛, և վասն զի մա-
նուկ հասակաւ և մեղստելի անձամբ սպա-
սաւորեմ շնորհաց Հոգւոյն, և Հարց մերոց
կանոնական սահմանաց... իմ աղագուտ աս-
տուածամարտ գտանիցիք⁴»։ Սակայն, ի
զուր եղեն ամենայն աղաչանք, ինչպէս որ
ցաւագին կերպով կը պատմէ յիշատակարա-
նին մէջ, թէ «Մի՛ անգամ և երկիցս հանի
զոյն յատեան և ի ժողովս եպիսկոպոսաց
և իշխանաց, և ոչ եղեւ պարապումն զոնէ
ընթերցման կամ ունկնդրութեան⁵»։ Զու-
գիւով երկարել խօսքս այսպիսի հանրածա-
նով զրբէ մը վրայ, զոր անկարելի է զրուս-
տել ըստ արժանի, կ'անցնեմ իւր ուրիշ գրու-
թեանց. — Ինչպիսի՞ բացատրութիւնք պէտք
են, որով կարենամ խօսել այն երկու աննման
զահանքերուն վրայ, յորոց մին՝ Քրիստոսի
Համբարձման, և միւսն՝ Հոգւոյն Սրբոյ
գալտեան տօներու խորհուրդները կը պատ-
կերացնեն մեզ, այնպիսի կենդանի գոյներով՝
որ թուինք ականատես ըլլալ այն աստուած-
այային հանդիսից։ Մերթ լուսոյ և ստուերի
փոփոխակի յաջորդութիւնք⁶, մերթ յանկար-

ծածազ նշոյլ մի՛ որ կը բանայ առաքելոց
միտքը, և կ'ողբան իրենց սիրելի վարդապե-
տէն զրկումը⁶. Հրեշտակաց տագնապն և
զարմանքն՝ երբ կը տեսնեն Քրիստոսի տի-
բաբար երկինք վերանալը և յաղթանակաւ
մուտքը⁷. այսպիսի հիմնադի գրուագներով
հիտեր է իւր Համբարձման ճառը։ Ոչ նուազ
ճոխ է իմաստիւք և գեղեցիկ՝ Հոգւոյն Սրբոյ
գալտեան վրայ զրած ճառն, ուր սէր է որ
կը խօսի «Սիրոյ աղբեր» վրայ։ Բովանդակ
խորատուութեամբ իւր նիւթոյն մէջ, հանդիսին
սրբազան յիշատակներով զբաւուած, գեղե-
ցիկ կերպով կը նկարագրէ Հոգւոյն Սրբոյ
էջըր յաշխարհը. «Թայնժամ սպառեալ ամե-
նակարն զօրութիւն, փրկականն առատու-
թիւն, հեղութեան աղբիւրն, մարգարէ
շնորհն, բարութեան Հոգին, հեղումն առա-
տութեանն Աստուծոյ, անցանէր ահեղ որոտ-
մամբ ընդ դասակարգութիւնս անմարմնակա-
նացն պարուց. և որանշացեալ պակեան հիաց-
մամբ նահապետութիւնք երկնաւոր զօրացն⁸»։
Որքան ճարտար է նոյն բանը այլեւայլ կեր-
պով բացատրելուն մէջ. բաւական է կարգաւ
առաքելոց լեզուախօսութեան հրաշից նկարա-
զիրը⁹. — Սրբոյն երրորդ գահարն է թուովն
առ լեւոն թաղաւորն. Փիլիպպեան մ'է սա,
բրիտանոնական հոգւով օծուած և անուշցած.
սեղմ իմաստիւք և զօրաւոր փաստիւք՝ կ'ըմ-
բերանէ հակառակորդաց բերանը, որք հե-
ռուէն սուր կը շողացնեն միայն. իրաւունք
և ճշմարտութիւն իւր կողմն են, զիտէ զայն
Համբարձման իւր յաղթութեան վրայ՝ յատպարկ
կը կոչէ զանոնք. «Պա-
տրաստ եմ ի պատասխանատուութիւն և Զո-
րոյգետոյ բնակչացն, և մերոյ աշխարհիս, և
ամենայն հակառակորդի, որ չեմ մնորեալ
և ոչ ստերիւրեալ ի սուրբ եկեղեցւոյ սաղի-
շաւացն, ոչ ըստ հաստոյ և ոչ ըստ բարե-
կարգութեան¹⁰»։ — Նոյնպէս Առնեմարաւոս.

1. Անշ. 187-118:

2. Անշ. 23:

3. Անշ. 24:

4. Անշ. Յիշատակարան. 556:

5. Ճառ ի Համբարձման Տեսան. 262-4:

6. Անշ. 269-273:

7. Անշ. 277-281:

8. Ներդրողեան ի գալուստ Հոգւոյն Սրբոյ.
315-6:

9. Անշ. 308-9:

10. Թաղք առ լեւոն. 215. Նոյնպէս. 245-6:

բիւնէ՝ հրաշայիբ մ'է հոնտորական արուեստի։ Միշտ նոյն ազնուական միտքն է՝ որ կը վառի և կը վառէ միութեան և սիրոյ զգացմամբ և եկեղեցական իրաց բարեկարգութեամբ։ Ո՛վ կարող է առանց հեծելու կարգալ այն տողերը, յորս Քրիստոսի եկեղեցւոյ միութեան պառակտումը կը նկարագրէ¹։ Երբեմն սէրն ի սուր կը փոխուի, արդար գայրոյթը հեծնութեամբ կը մեղմէ։ «Ո՛վ մտացի դու, և ո՞ր ուսար վերօր զվէր բռնկել։ Պաւլոս բաժնասելոյն բնդղմ՝ օրհնեաց... զքեզ հետեւող նորին՝ և ուսոյց շարի շար հատուցանել²»։ Յանկարծ կը կարծէ լսել փրկութեան աւետիսը, կը կարծէ տեսնել միութեան լրումը, և ո՛վ կարող է բացատրել ուրախութիւնը։ «Ան հնչեցին ձայնք աւետիսայ յակնն ձեր... Տո՛ւք ի ձեռն ճարտարապետիդ իմաստնոյ՝ ոմն զոսկեղէն հաղանգութիւն, ոմն զարծաթեղէն համակամութիւն, այլք բազմեանդ քարինս սիրոյ³», և այլն։ Եւրոպացի գիտնականք անգամ զմայլեր են զրութեանս ոճոյն և հոգւոյն վրայ, յորոց մին՝ Կիկերոնի կը նմանցնէ, և միւս ոմն «Թէ որ Դեմոսթենէս, կ'ըսէ, նոյն առիթներուն մէջ գտնուած ըլլար, ինչ որ այս Սուրբս, և անոր հաւատոց ճշմարտութիւնը ճանչցած ըլլար, իրմէ տարբեր չեզու պիտի չգործածէր⁴»։ Իւր սուղ կենաց կէտն հազիւ անցած, քսան և վեց տարեկան, մինչ Սաղոսի անապատին միայնութեան մէջ կը ճգնէր մշտամոռնա՝ ազօթիւք, իւր բարեյիշատակ դատարարակին՝ Յովհաննոս՝ խնդրանօք զքեզ Սաղմոսաց մեկնութիւնը։ Աստ չեն երեւիր ոչ կայծք և ոչ թօնիք, այլ երանական հանգստութիւն մի՝ որով միշտ խօսակից ընդ Աստուծոյ, ներանձնական կենօք միայն կը պարապի, աշխարհէ և անոր աղմուկներէն հեռու։ Մերթ առ Աստուած կը դառնայ, մերթ առ հօգին։ Դաւթի հետ կը

բարձրանայ յերկինս, ուր Աստուծոյ փառքը կը տեսնէ։ Կը դիտէ ծովուն անհուն տարածութիւնը՝ յորում Աստուծոյ անսահմանութեան աղօտ պատկերը կը գտնէ, և անոր ծփմանց և անդորրութեան մէջ՝ կը նկատէ հոգւոյն յուզումները և խաղաղութիւնը։ «Ձոր օրինակ ծով՝ որչափ ի ծփման է, ոչ կարէ որ յայտնի զկէտն իւր ի նմա նկատել։ Իսկ յորժամ զաղաթի ի ծփելոյն, վաղվաղակի նայեցողին պատկեր ի նոյնն ճշգրիտ երեւի։ Այսպէս և միտք՝ որչափ ընդ զբաղումն աշխարհի պատառեալ է, մարմինն ի ծփման է... և ոչ կարէ զտեսակ վարուց իւրոց ճշգրիտ նկատել⁵»։ Կը նկարագրէ եղանակաց կարգը, արեւու շարժումը, թէ ինչպէս դէպ ի հարաւ խոնարհելով, երբ պտուղները հասունցնելու այլ ետ պէտք չկայ, կը թողու որ զայ ցուրտը տիրէ։ «Եւ ապա վստասկելոյն ի պաղարեւութենէ անտի երկրի՝ ծածկոյթ ափէ զձինն և զսառն, և հանգուցանէ զնա⁶։ Իսկ յորժամ սերմանիքն սկսանին բնական ի սկիզբն զարնայնոյն՝ ի վեր դիմեալ (արեգակն) առ խոյնն, շերմութեամբ պաշտպան լինի սերմանեացն... և զարձեալ տուգան⁷»։ Կը խօսի թոյնոց բնականութեան, անոնց կերակրոց և իրարու հետ ունեցած աննշխարհաց վրայ⁸, ինչպէս նաեւ ձկանց բազմութեան, անոնց բնութեան, և ի մասնաւորի վիշապ ձկան, առ որ՝ Որոգիներայ վկայութիւնը մէջ կը բերէ⁹։ Իւր ժամանակի աշխարհագրական գիտութեան սահմանը կու տայ մեզ, երբ կ'ըսէ։ «Ի Հերակլեան արձանացն՝ որ յարեմմոս, ուստի հեղեալ ջուրք ծովուն՝ զօգանայ, մինչեւ ցելս արեւու յԵթովպիա, յորում ծոց առեալ անուանի Ովկիանոս, և անտի մինչեւ ցելարմիր ծով յԵգիպտոս, որով բաժանի Սկիւթիք, և պարսկէ Սիկիլիա յարեմմոսը, պարանոց տանը-

1. Առեմարանդիան. 121-2:
2. Անշ. 160-1:
3. Անշ. 176-7. 201-203:
4. Վ. Հ. Գարեգին Վ. Զարբ. Հիմ դպր. պատմ. 1897. էջ 654:

5. Մեկն. Սաղմոս. 9. 2:
6. Անշ. 210Ը. 7:
7. Անշ. 219. 19:
8. Անշ. 219. 17:
9. Անշ. 219. 25:

լով նորա շուրջ զՄիջերկրեօքս¹⁾ և — կնիք բանիցս, կ'երեւի Լամբրունցիին իւր գրութեանց մէջ, իբրու դերագանց աստուածաբան, հմետ ամենայն սրբազան գիտութեանց, քաջ մեկնիչ Ս. Գրոց, իմաստաւեր և պերճախօս, տեղեակ բնական գիտութեանց և աշխարհագրութեան, որով և անմասն և գերազանց քան զամէն մատենագիրս մեր:

Հ. ՅՈՎՀ. ԹՈՐՈՍԵԱՆ

ՍԱՐԳԻՍ Վ. ՇՆՈՐՀԱԼԻ

(Շար. և վերջ, տես յէջ 376)

Որքան և մեր խոստացած հարեանցի տեսութեան շրջանն զուրս, սակայն իբրու անոր հակիրճ յաւելում, թող ներուի մեզ, երկու խօսք մ'այլ գրուցել ներկայ յօդուածիս՝ Սարգսի ընծայուած ուրիշ քանի մը գրուածոց հարազատութեան մասին: Արդ, բաց ի Եօթն կամօղիկէ թղթոց ընկարձակ մեկնութենէն՝ որ Սարգսի գլոխ գործոցն է, իրեն կ'ընծայուի նաեւ Մեկնութիւն մի Մարգարէութեանն Եսայեայ. ուրիշ մեկնութիւն մ'այլ աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. զարձեալ Ոսկեփորիկի մը մէջ կը գտնուի Սարգիս մակագրութեամբ համաօտ գրուածք մի՝ Առաջաւորաց պահոց վրայ. նաեւ բանք ինչ ի Յարութիւնն Բերստոսի²⁾ Սակայն, թէ ստուգելի Սարգիս Շնորհաւոյտ զըջին արդիւնքն են այս ամենայն գրուածք, թէ ուրիշ համանուն Հեղինակի մը, քննելի է այդ, զոր և կը ջանանք ընել հոս բոս կարելոյն:

Նախ և առաջ, ժամանակն մեր ձեռքը հասուցած չէ վերոյիշեալ երկու մեկնութիւնքն եւս, և թէ այս մասին բնաւ յիշատակութիւն մ'այլ չեն ընէր Սարգսի անձին և գրուածքին վրայ տեղեկութիւն տուող երկրորդն Հեղինակըն, Կարապետ վարդապետ և Կիրակոս Գանձակիցիին: Եսայեայ մարգարէութեան մեկնութիւն մի Սարգսի ընծայող՝ մի միակ անձն է երեքտասաներորդ դարու մէջ ապրող Գէորգ վարդապետն, որ և ինքն մեկնութիւն մի բրած է նոյն մարգարէութեան, որուն յառաջաբանին մէջ կը յայտարարէ, թէ արդէն « ոմանք յառաջ քան զմեզ գրեալ են զմեկնութիւն սորա³⁾ » (մարգարէութեանն Եսայեայ), յորոց և հաւաքելով յօրինած է Գէորգ իւր այս մեկնութիւնը, նշանակելով միանգամայն ի լուսանցս այդ Հեղինակաց անուանքը. և ի միջի այլոց, նաեւ քառասուն կտորի չափ հակիրճ հատուածներ մէջ բերած է քաղելով Սարգսի Եսայեայ մեկնութենէն: Յետ մի անգամ աչքէ անցընելու այդ հատակտորքը, շատ չենք վարանիր Սարգիս Շնորհաւոյ գրչին արդիւնք համարելու զայնս և ոչ ուրիշ համանուն Հեղինակի մը, բոս ուրում այդ քաղուած հատուածոց մէջ ուրեք ուրեք կը տեսնուի նոյնութիւն մի հայկական լեզուի բացատրութեանց, և նմանութիւն մի բարդեալ բառից Սարգսի Եօթն կամօղիկէ թղթոց մեկնութեան լեզուին հետ. ահաւասիկ յիշենք հոս այդ բազմաթիւ բառերէն մի քանիսը միայն. սառանձամուտ, շարասանոտ, ժամանակաշոր, քաղմամարդոտքիան, անհետագոտելի, անքարագնեղի, համաշխարհական, անարար, ինքնադէպ, ժանրաբեռն, քեանակիր, խորհրդակցութիւն, լուսատեսակ, և այլն. և այլն. ասոնք բառեր են՝ զորս՝ չենք բեր թէ ուրիշ Հեղինակներն եւս գործածած չըլլան, այլ այդ բառից ստեղծ ստեղծ գործածութիւնն Գէորգայ՝ Սարգսի ա-

1. Մեկն. Սարգ. ՀԱ. 9:

2. Մեծ. Վեննակ. Մխիթ. Հարց վերջերս ի լոյս ընծայած Հեազարաց ցուցակին մէջ՝ տարակուսանօք իրեն կ'ընծայուին նաեւ երեք յորդորք կամ ձառք « ի Տէրն ամենայնի. » « ի բանն Բար-

ձըր պարծի ողորմութիւն » և ի բան՝ Զամենայն հոգս ձեր ընկեցէք: » — Առանց մեր աչաց առելու ունենալու, չեմք կարող խօսք մի զընդեւ զոտ հարազատութեան մասին:

3. Ի Հեռ. օր. մատեն. Ս. Դաւաբու, էջ 3: